ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ
ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳՆԵՐԻ» ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՐԳԱՆ ՋՀԱՆՅԱՆ

23, ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2024թ.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ՝ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՏՎԱԾԻ ԱՆԴԱՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. «Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետ՝ EITI/ԱՃԹՆ) բազմաշահառու խմբի հանքարդյունաբերության ոլորտի գործարար հատվածի անդամի ընտրության» ընթացակարգը սահմանում է ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի հանքարդյունաբերության ոլորտի գործարար հատվածի անդամների ընդրության կարգը (այսուհետ՝ ԲՇԽ) :
2. ԲՇԽ անդամի (4 անդամ) և այլընտրանքային անդամի (4 անդամ) ընտրությունը կատարվում է ՀՀ ԱՃԹՆ բազմաշահառու խմբի աշխատակարգի և «Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն» ՀԿ-ի (այսուհետ՝ Միություն) կանոնադրության 2.2.5 կետի «բ» և 8.17.6 ենթակետերի պահանջներին համապատասխան:
3. ԲՇԽ անդամի և այլընտրանքային անդամի ընտրությունը կատարվում է 3 տարի անընդմեջ ժամկետով:
4. ԲՇԽ նախկին անդամի և այլընտրանքային նախկին անդամի լիազորության ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ կատարվում է նոր անդամների ընտրություն:
5. Միության տնօրինությունը հանքարդյունահանող և երկրաբանական ուսումնասիրություն իրականացնող Միության անդամ կազմակերպություններին ծանուցում է ԲՇԽ-ում իր կազմակերպության շահերը ներկայացնող նոր անդամների թեկնածուների առաջադրման մասին, սահմանելով խելամիտ ժամկետ:
6. Թեկնածուների առաջադրման մասին գրավոր տեղեկությունը պետք է պարունակի թեկնածույի անունը, ազգանունը, պաշտոնը, էլ.հասցեն և հեռախոսահամարը:
7. Միության տնօրինությունն իր կողմից սահմանված ժամկետում Միության անդամ կազմակերպություններից նոր անդամների թեկնածուների առաջադրման մասին գրավոր տեղեկությունն ստանալուց հետո, 3-օրյա ժամկետում, ամփոփում և կազմում է համապատասխան քվեաթերթիկներ՝ առաջադրված թեկնածուների կազմով:
8. Յուրաքանչյուր քվեաթերթիկ պարունակում է սահմանված կարգով և ժամկետում առաջադրված թեկնածուների անունները և ազգանունները, առաջադրված կազմակերպության անվանումը, թեկնածուի պաշտոնը կամ այն կազմակերպության

անվանումը, որը ԱՃԹՆ ԲՇԽ-ում կներկայացնի թեկնածությունը ներկայացնող կազմակերպության հետաքրքրությունները, հեռախոսի համար և էլեկտրոնային հասցեն՝ քվեարկելու համար առանձնացված համապատասխան վանդակներով:

9. Համապատասխան քվեաթերթիկները 3-օրյա ժամկետում ներկայացվում են կազմակերպություններին՝ ծանուցելով հեռավար ժողովի անցկացման ժամի մասին:
10. Եթե թեկնածուների թիվը ՀՀ ԱՃԹՆ բազմաշահառու խմբի աշխատակարգով սահմանված քանակից (4+4) շատ են, ապա քվեարկության չի դրվում այն թեկնածուի անունը, որը որպես ԲՇԽ անդամ ընտրված է եղել նախորդ ընտրությունում:
11. Հեռավար ժողովը ընտրում է ժողովի նախագահ, քարտուղար և կազմվում է արձանագրություն:
12. Ժողովի արձանագրությունը ստորագրվում է ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:
13. Յուրաքանչյուր կազմակերպություն ունի չորս քվեի իրավունք, որոնցից յուրաքանչյուրը կարող է տրվել առաջադրված թեկնածուներից որևէ մեկին:
14. Քվեարկության մասնակիցն իրավունք չունի իր բոլոր քվեները տալ թեկնածուներից միայն մեկին: Թեկնածուների օգտին քվեարկությունը կատարվում է համապատասխան վանդակում «✓» նշանը դնելու միջոցով:
15. Քվեարկված քվեաթերթիկը՝ ընկերության գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ և ընկերության կլոր կնիքով, էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում է Միության տնօրինություն:
16. Միությունը, ստանալով քվերակած քվեաթերթիկները, ամփոփում և արդյունքները ներկայացնում է ժողովի նախագահին, քարտուղարին և Ժողովի մասնակիցներին:
17. Միության տնօրինությունը Ժողովի կողմից հաստատված արձանագրությունը 2-օրյա ժամկետում ներկայացնում է ՀՀ ԱՃԹՆ քարտուղարություն: